լռել է, և ինչու. միայն մէկ բացատրութիւն կայ և այն է, որ հովանաւորութենից չը զրկվի։ Բայց որովհետև Գ. Խ. և դրա նմանները կը հարցնեն՝ ինչ ծիծաղաշարժ բան կայ այդ կը հարցնեն՝ ինչ ծիծաղաշարժ բան կայ այդ տեղ, կասեմ. ծիծաղաշարժը այն է, որ երբ ազգը հաց չունի ուտելու, դուք ուզում էք հասարակական փողերով Գասպարեան անկելանոցի պատերը զարդարել։

Այժմ. ինչու չը կայացաւ մայիսի 3-ին ընդհանուր ժողով։ Գ. Խ. և նրա նմանները կը գոռան՝ «հասարակութեան անտարբերութիւնն է պատճառը». ոչ, պատուելի ընթերցող, այստեղ մի քանի պատճառներ կան, և դրանց մէջ հետաքրքրելի և խոտղեցուցիչ (щекотливый), որոնց մասին ես կը խօսեմ հարկաւոր ժամանակը։

Յետոյ. Գ. Խ. ասում է, ես այնքան անբարեխիղճ եմ, որ չը հաղորդեցի, թէ պ. պ. Յ. Անանեանցը և Գ. Լիանոզեանցը պակի ծախքը իրանց վրա առին և հետևաբար նոյն ժողովում հանգանակվեցաւ մօտ 400 բուբլի։ Ես այդպիսի մի տեղեկութիւն չը հաղորդեցի, որովհետև ես այնքան անամօթ չեմ, չեմ ասում, անբարեխիղճ, որ Գ. Խ-ի նման ամբողջ հասարակութեան առջև փաստերը, նրանց մօտիվները, նրանց պատճառները ոտնակոխ անեմ։—Ես իմ նամակս գրելիս լաւ համարեցի լռել, քան սուտ խօսել։ Իսկ այժմ հարկադրված Գ. Խ.-ից (медвѣжья услуга Գ. Խ-ի կողմից) կասեմ, որ պ. պ. Անանեանցը և Լիանոզեանցը իրանց վրա առան պակի ծախքը ոչ թէ որ և իցէ բարեգործական կամ հերոսական (гражданскій героизмъ) զգացմունքից դրդված, ինչպէս ներկայացնում է Գ. Խ. այլ հարկադրված էին իրանց վրա առնել և այլապէս հնար չունէին. ինչով էին հարկադրված, կասեմ, երբ Գ. Խ. կը յանդգնի պնդել հակառակը։ Բայց ինչն էր դրդել Գ. Խ-ին այդ գործին այդպիսի մի անձնանուիրական նշանակութիւն տալ. թող ընթերցողը պատասխանէ։

Ես հարկաւոր չեմ համարում խօսք մինչև անգամ ասել նամակի այն մասի համար, ուր պ-նիւ պարոնը զննում է իմ նամակի բովանդակութիւնը. իսկ ինչ կը վերաբերի Յ. ա. ք. Սուրէնեանցի ժողովրդականութեանը, դա ապագան ցոյց կը տայ, առ այժմ ընթերցողը թող դիմէ Մոսկվայի Յ. ա. ք. Սուրէնեանցի «Հարիւրամեակի» հետևեալ էջերին. 38 և 76։

Այժմ մի քանի խօսք «Մշակի» 67 №-ի նամակի ազդեցութեան մասին Մոսկվայի հասարակութեան վրա։ Մի քանի տեղից լսել եմ այսպիսի մի դատողութիւն, թէ նամակը հասարակութեան տրամադրութեանը շատ համապատասխան է, շատերը բաւական են այն նամակովը։ «Իսկ նամակի առարկաները» գործիչները, որոնց շրթունքները դեռ Գ. Խ-ի քսած մեղրը վայելում են, մտադիր են արգելել ուսանողներին ընդհանուր ժողովներին ներկայ լինելու։ Իրաւաբանական տեսակէտից կարելի է իրաւունք ունեն այդ անելու, իսկ մարդկային և ազգային տեսակէտներից իրաւունք չունեն և եթէ անեն, սաստիկ կը սխալվեն։ Երբ ուսանողութիւնը աշխատում է մօտենալ հասարակութեանը, նրա հետ ծանօթանալու, կեանքի փորձերով հարստանալու, նոյն իսկ հասարակութեան ներկայացուցիչները կամ ազգային գործիչները հեռանում են նրանից, հեռացնում են իրանցից և դրանով զրկում են կեանքի հոսանքը հասարակութեան և երիտասարդութեան անչուշտ հարկաւոր և բնական փոխադարձ ազդեցութիւններից։ Այդ ընդհանուր ժողովները ուսանողութեան համար կարող են և պէտք է լինեն հասարակական ուսումնարան, ուր կարելի կ'ինի հասարակական կրթութիւն ստանալ և հասարակութեան զգացմունքները զարգացնել (Общественное воспитаніе и чувства общественности)։ Ռուսաց ներքին խռովութեանց բազմակողմանի պատճառներից մէկն, ինչպէս շատ անգամ ռուսաց առողջամիտ լրագրիները խօսել են, այն է, որ ռուսաց երիտասարդութեան և հասարակութեան մէջ կապեր չը կան։ Ցանկալի է, որ մեր գործիչները չը մոռանան այս ճշմարտութիւնը։

Եւ այդ մտադրութեան մէջ կարելի է տեսնել նոր ապացոյց (և այդպիսի ապացոյցներ շատ կան), որ հայերը չեն սովորել հասկանալ՝ ինչ բան է կրիտիկան։ Եթէ մէկի սիրալը ցոյց ես տալի, նա իսկոյն դառնում է քո ոխերիմ թշնամին. նա չէ ուզում հասկանալ քո ասածդ. իր կարծիքը պաշտպանելու տեղ, եթէ համոզված է դրանում, նա յարձակվում է քո անձնաւորութեանդ վրա և աշխատում է ցեխել, մրոտել։ Ցիշում ես ընթերցող, ինչ արաւ Սենեքերիմ Արծրունին երբ որ նրան նկատեցին, թէ Համլետը լաւ չէ թարգմանել, և որ մէկը ասեմ։ Այս երևոյթը ապացուցանում է միայն այն, որ մեր այդպիսի հասարակական, «ազգային գործիչները» ծառայում են ոչ թէ ազգի, հասարակութեան օգտին, այլ միայն այն նպատակին, որ նրանց փառաբանեն, խունկ ծխեն։ Ավաոս։

Ն. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

—

Յունիսի 17

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ զընացի այցելութեան Ալբիաղների երկրում բնակվող հայերին, որոնք գաղթել են Ցաճկաստանից անցեալ տարի։ Այդ բնակութեան տեղերի անունները են Աբչալար Միցերա, և Վատցի։ Հայերն իրանց կողմից անուանել են «Մէջին Հայաստան», ունեն մի քահանայ, իսկ իրանք պարապում են երկրագործութեամբ և շատ աղքատ վիճակի մէջ են։ Սոցա ինձ ուղղած նամակը ուղարկում եմ խմբագրութեանդ տնօրէնութեանը։

Բացի սրանցից Թիւրքիայից նոր գաղթած 200 ընտանիք 2 քահանայով, գտնվում են Սուխումում բաց օդի մէջ և դարձեալ չարունակվում է գաղթականութիւնը։ Տեղական հայերը բաւական օգնում են սրանց, հիւանդներին և ծերերին դականներին իրանց տներում տեղ տալով և հոգ տանելով։ Զարմանալի է, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը թոյլ է տալիս այս գաղթականութեանը, որը մեր ազգի նպատակին սարսափելի հարուած պէտք է տայ։

Այս վերջինների մասին ներկայացայ Սուխումի նահանգապետին և խնդրեցի ռուսաց կառավարութեան ողորմած տնօրէնութիւնը։ Պ. նահանգապետը ասաց «արդէն կարգադրութիւն եղած է կառավարութիւնից տեղ տալ դրանց առանց դրամական օժանդակութեան, իսկ դուք հարուստ հայեր շատ ունէք Թիֆլիզում. թող օգնեն նրանք։»

Այս ողորմելի ժողովրդեան օգնելու մասին, մեծ յոյս կայ ազգասէր պ. Կարապետ Պօղոսի վրա։

Գէորգ քահ. Գնունի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Յունիսի 17-ին

Նորերումս երևացող գիսաւոր աստղը առիթ է դարձել սնոտիապաշտ ամբոխի այլ և այլ գուշակութիւններին։ Մինը կարծում է, որ կըռիւ կը լինի անսպատճառ և այն էլ մեծ, արիւնահեղ կռիւ։ Ուրիշները ասում են, որ «մահ տարաժամ» կը լինի, կամ «մահ անսանոց»։ «Սատակեսցին եղինս բազումս»— ասել է Էփիմէրդին,— հաստատում են նրանք։ Իսկ ոմանք նախագուշակում են որ՝ այդ գիսաւոր աստղը «Հայաստանի աստղն է»։

Յունիսի 15-ին յանձնվեցաւ քաղաքային պ. պ. դէպուտատներին հասարակութեան կողմից մի խնդրագիր կանոնադրութեան հետ միասին, քաղաքում մի «մատենադարան—ընթերցարան» բանալու համար թոյլտուութիւն խնդրելու կառավարութիւնից, որը ընդունվեցաւ նրանց կողմից մի հաճելի պատրաստականութեամբ։ Մենք երբէք չենք կասկածում որ՝ ինչպէս պ. պ. դէպուտատները, նոյնպէս և թաղապետական ժողովը զգալով մեր քաղաքում «մատենադարան» ունենալու կարևորութիւնը, կը յարգէ անչուշտ հասարակութեան խնդիրը և կառնէ պարտուպատշաճ տնօրէնութիւն։ Ալէքսանդրոպոլը ցանկանում է ունենալ այն, ինչ որ ունեն շատ գաւառական քաղաքներ շատ վաղուց։

Ցանդիմանութեան արժանի էր դարձեալ մի սրտաբեկ երևոյթ, որ շատ անտարբեր — բթամիտներ, որոնց համար երբէք չէ եղել և չը կայ ոչինչ հասարակական, այնպիսի անճոռնի պատճառաբանութիւններով հրաժարվում էին ստորագրել «մատենադարանի» խնդրաթերթին, որ կարծես դրանց կամենում են կողոպտել, կամ թէ չէ, ստորագրելիս թոկը իսկոյն կը դցէին դրանց շլինքը և քաշ կը տային դէպի սպանդարան։ Մեզանում հասարակութեան միջին և ստորին դասակարգերը, եթէ ոչ եռանդով, գոնէ համակրութեամբ են վերաբերվում առհասարակ դէպի այս կամ այն ընդհանրական օգտաւէտ հիմնարկութիւնը և ոչ որպէս մեր նիւթապաշտ բթամիտները։ Թէ որքան անհրաժեշտ է և օգտաւէտ մատենադարան ունենալը մեր քաղաքի փոքր ի շատէ զարգացած հասարակութեան համար, այստեղ բացատրելը շատ հեռուն կը տանէր մեզ։ Դա կարօտ է մի մանրամասն և զօրեղ գրուածքի։ Այս միայն պարտաւոր եմ համարում յայտնել, որ շատ շատերը սրատրոփ սպասում են նրա բացմանը։ Խեղճեր.... դեռ չը գիտեն, որ շատ անգամ ամենաազնիւ մտադրութիւններն էլ հանդիպում են զզվելի արգելքների և անողոք ընդդիմադրութիւնների....

Տ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 յունիսի

Թիֆլիսէն մեկնելուց երկու օր առաջ պարտք եմ համարում իմ շնորհակալութիւնս յայտնել ձեզ հրապարակաւ իմ հրաժարական ներկայացմանը ձեր թատրոնը ինձ անվարձ տալու համար, քանի որ քաղաքային թատրոնը փողով վարձելն անգամ ինձ արգելեցին։ Նոյնպէս յայտնում եմ իմ շնորհակալիքս տ. տ. վրաց դերասանուհի Գարունիային, սիրողներ Փաշայեան-Տէր-Գրիգորեանցին, Փառանձեմին և պ. պ. Զմշկեանին, Զիժեանին, Տէր-Գրիգորեանցին, Սաֆրազեանցին, Միրազեանին, Պարոն-Սարգսեանցին, Մկրտիչ Տէր-Սիմոնեանցին, Կոստանդին Արզումեանցին, որոնք ազնուաբար իմ ներկայացման մասնակցեցին առանց մի որ և է ակնկալութեան, քանի որ Թիֆլիսի հայ դերասանական խումբը չը կարողացաւ անել այդ։ Այս առիթով քաղցր պարտք եմ համարում իմ շնորհակալութիւնս յայտնել Թիֆլիսի հասարակութեանը ինձ ցոյց տուած անչափ համակրանաց համար, թէ ներկայացման սկզբումը, թէ ներկայացումից յետոյ։ Այդպիսի ընդունելութիւն, այդպիսի անկեղծ համակրութիւն, ես երբէք չեմ տեսել։ Ես խօսք չեմ գտնում իմ զգայմունքներս յայտնելու, այնչափ ես երախտապարտ եմ Թիֆլիսի հասարակութեանը։ Հրապարակաւ իմ շնորհակալութիւնս և մնաս բարեւս ասելով սիրելի և յարգելի հասարակութեանը, մի և նոյն ժամանակ շնորհակալ եմ այն ամեն ծանօթ և անծանօթ ազնիւ պարոններին, որոնք նամակներով ինձ իրենց համակրանքն են յայտնել։

Աստղիկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՇՈՒԼԱՒԵՐԻՑ մեզ գրում են։ «Յունիսի 20-ին մի անյայտ անձնաւորութիւն սպանել է պ. Գալուստ Յովհաննիսեանցին, առիթ բռնելով թէ վերոյիշեալ պարոնը սաստիկ կերպով հարուածել է իր շանը։ Սպանվածը արդէն թաղված է, իսկ չարագործը անհետացել է։»

—

Շնորհակալութեամբ ստացանք «Մարդու բարոյական զարգացումն գրքոյկը, Վ. Մօղէսովի յօդուածից թարգմանել են Լ. Իւզբաշեանց և Գ. Մախմուրեանց։ Թիֆլիս, Մ. Ռոտինեանցի և ընկ. տպարան, 1881 թ.։

—

Շնորհակալութեամբ ստացանք Բագուից «Սոխակ Հայաստանի» վերնագրով երգերի հաւաքածուն, որ հրատարակել է պ. Ա. Գրիգորեանց։ Դա առաջին հատորի փոփոխած երկրորդ տպագրութիւնն է։ Երգերի ընտրութիւնը լաւ է։ Գրքի տիպը մաքուր է և տեսքը գեղեցիկ։ Բագու Ս. Տէր-Յովհաննիսեանցի տպարան 1881 թ.։

—

Մեզ գրում են Մեծ-Ղարաբլիսից։ «Օր չէ անցնում, որ մեր անտառավարչութեան մէջ չը կրկնվեն բազմատեսակ անիրաւութիւններ։ Վերջերումս էլ մի գիւղացի մարդ իր սայլը քշելու ժամանակ, անտառապետի օգնականի հրամանով ստիպված է լինում, լաւ թակվելուց յետոյ, յետ տալ իր սայլի անիւները, որ օգնականին նոր չինված երևեցան։ Այսպիսով խեղճը ճանապարհի մէջ տեղ բանախափան է լինում։ Օգնականից պակաս դեր չեն խաղում պօլեսովշչիկները։»

—

Մեծ-Ղարաքիլիսից մեզ գրում են որ այդտեղի երիտասարդները սաստիկ վարակված են թղթախաղի ախտով։ Ամբողջ օրերը անցնում են այդ յիմար պարապմունքի մէջ։ Զարմանալի է որ հայերը, որոնք հռչակված են խելօք ժողովուրդ, ամբողջ օրերը անցնում են թղթախաղի մէջ։ Եւ ինչ կարող է աւելի յիմար, աւելի աննպատակ լինել քան թէ թղթախաղը։

—

Այնքան շատ ենք ստանում ամեն կողմից նամակներ, որոնց մէջ յայտնում են ցանկութիւն զրվել Դիլէորիէի հայոց օրգանին, որ մենք այլ ևս չենք կարող տպագրել բոլորի ազգանունները։

—

ՁԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ մեզ հաղորդում են որ այդտեղի դպրոցների վարչութիւնը մտադիր է այս տարի տղայոց դպրոցում 3-որդ դասատուն ևս բանալ։ Թղթակիցը զարմանում է այդ դիտաւորութեան մասին, հաստատ գիտենալով որ դպրոցի երկաթեայ գանձարկղում, որ գնված է եղել 150 բուբլով, ամենևին փող չը կայ։

—

ՕՐԴՈՒԲԱԹՑԻ մեզ գրում են։ «Բաղաքիս հայ հասարակութիւնը ընտրել է իր սուրբ Սահականոս եկեղեցու գանձապետ իր համաքնակիչներից մինին, որ գտնվում է տէրութեան ծառայութեան մէջ։ Այս պարոնը զբաղված լինելով իր ծառայութեան գործերով, իր կողմից իր համար օգնական է ընտրել մի թուրք, որին յանձնել է եկեղեցական հաշիւների մաքրելը և ժողովրդից եկեղեցապատկան գրամների պահանջելը։»

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ հաղորդում են հաստատ աղբիւրներից, որ Մոսկվայի Լազարեան ճեմարանի դիրեկտոր Նիկոլայ Գաբթեան Գելանովի հրաժարականը իր պաշտօնից դժբաղդաբար արդէն կատարված իրողութիւն է։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ընդունելով Գելանովի հրաժարականը, լուր կայ որ նշանակելու է նրա տեղ ճեմարանի այժմեան տեսուչ պ. Գէորգ Քանանեանցին։ «Երանի թէ, աւելացնում է մեր թղթակիցը, պ. Քանանեանց գոնէ այսուհետև, ինչպէս հարկն է, գնահատէր իր վրա ստանձնելու բարձր պաշտօնի մեծ պատասխանատուութիւնը ամբողջ հայոց ազգի առջև և զգուշութեամբ կատարէր իր պարտականութիւնը մեր մայրենի լեզուի վերաբերութեամբ, որ նա, որպէս տեսուչ, միշտ աւելորդ է համարել։ Բացի սրանից, եթէ ստոյգ է որ պարոնը ստանալու է այդ տեղը, կը համարձակվենք նրան յիշեցնել այն, որ գուռզուութեամբ դժուար է գրաւել մի որ և իցէ հասարակութեան համակրութիւնը։»

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Նորին Վեհափառութեան հիւանդութեան լուրը և Ս. Էջմիածնի գործերի կառավարելը Վահրամ Մանկունու ձեռքով, մեծ ցաւ է պատճառել մայրաքաղաքիս հայերին։ Ս. Պետերբուրգի հայ հասարակութիւնը իր յոյսերը դնում է Թիֆլիսի մեր ազգայնոց արթնութեան վրա, որոնք տարակոյս չը կայ որ մի օր առաջ չեն զլանայ իրանց պատգամաւորների միջնորդութեամբ փրկել ազգային գանձերը, նրանց սպառնող վտանգից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Յունիսի և Նէապոլի մէջ պատահած հակաֆրանսիական ցոյցերի մասին հաղորդում են հետևեալը։ Յունիսի մէջ իտալացիներից մի ամբոխ հաւաքվեցաւ ֆրանսիական հիւպատոսի տան առաջ, որտեղ նրան սպասում էր պրեֆեկտը։ Շրջակայ փողոցների մէջ զօրքեր էին տեղաւորված։ Առաջ իշխանութիւնը փորձեց համոզել ամբոխին հեռանալ, բայց երբ այդ գործը չաջողվեցաւ, կարգացին յայտնի նախազգուշական օրէնքը։ Այնուհետև ամբոխը հեռացաւ հիւպատոսի տանից և ցրվեցաւ։ Նէապոլի մէջ ամբոխը շրջում էր փողոցների մէջ և կեցցէ էր կանչում ի պատիւ Իտալիայի և իտալական զօրքերի։ Պոլիցիայի եռանդոտ գործունէութեան շնորհիւ անկարգութիւններ չը պատահեցան։